



## ԱԶԳԱՅԻՆ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԸ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԵՎ ՍԱՅՐ- ՀԱՅՐԵՆԻՔԻ ՄԱՍԻՆ



**Մ**նմկարագրելի թովիշ հմայք ունի վերջալույսի տեսարանն Աբա-  
րատյան գեղադիր դաշտավայ-  
րում հունիսյան օրերին:

Կապույտ ու անամպ երկնակամարից արևի թափվող հրաժեշտի ճառագայթներից պատմանդի պես շոլցողում էր վեհանիստ ալեզարդ Մասսի սառցե թագը: Նրա ստո-  
րուում, Սրարատյան բերքառատ դաշտի կենտրոնում էջմիածնի վեր խոյացած դա-  
րավոր Մայր-տաճարի խաչերը փալլիում էին արեկի լուսաճանանշ շողերից:

Բնության այս վեհ տեսարանը նշանա-  
վորվում էր նաև մի ալ՝ Հայ եկեղեցու կյանքում տեղի ունեցող խոշոր պատմական իրադարձությամբ: Ս. էջմիածնի Հոգմոր ձեմարանի մեծ դահլիճում տեղի էր ունե-  
նում Աղքային— Եկեղեցական ժողովի վերջին նիստը: Հոգմոր և աշխարհիկ պատ-  
գամավորները հանդիսավոր ու խորհրդա-  
վոր լուսիւն մեջ ունկնդրում էին նորըն-  
տիր Վեհափառ Հայրապետի հրաժեշտի խոսքը:

Ամբոխի վրա էր Մասսի պես ալեզարդ և նրա նման հաղթ ու վեհաշութ նորընտիր Վեհափառը:

Սրարատյան դաշտի զովաշունչ զեփյու-  
րը ներս մտնելով դահլիճի լուսամուտնե-  
րից մայրական անհուն կարոտով ու գորո-  
վով գգվում էր Կապույտ ծովերի, խոռվա-  
հույզ ովկիանոսների, երկնահոււպ լեռների  
ան կողմից, հեռավոր ու օտար հորիզոն-  
ներից՝ հայրենիքի կարոտից տուրքած  
սրտերով Մայր-Հայրենիք ժամանած իր սի-  
րասուն զավակներին. փարվում էր նրանց,  
շոյում, փայտայում նրանց ժազերն ու դեմ-  
քը: Պատգամավորների լարված հայացքից  
և հուզված դեմքերից կարելի էր գուշակել  
նրանց ներքին ապրումները, հույզերը,  
մտորումները: Կինո-ժապավենի պես նրանց  
աշեքերի առօկից անցնում էին հարյուրավոր  
պատկերներ. մերթ մի պահ նրանք մտով  
փոխադրվում էին հեռավոր դաշտուները,  
սրանց նրանց անհամբեր սպասում են ի-

րենց հայրենակիցները՝ նրանցից ձշմար-  
տության, ոգևորության, սփոփանքի խոս-  
քեր լսելու համար Մայր-Հայրենիքի ծաղ-  
կման ու բարգավաճման մասին, մերթ փո-  
խադրվում էին Մայր-Հայրենիք՝ Սովե-  
տական Հայաստան ու Հոգում, համարու-  
թյան զգացմունքով լցվում նըա հարածուն  
վերեւիք, ծաղկած կյանեւ, խաղաղ ու բո-  
տեղաւորության աշխատանքի, ապագայի վաս-  
հեռանկարների համար: Թողոր պատգամա-  
վունքներ սրտերը համակված էին հայրե-  
նասիրական զերմ զգացմունքներով: Նրանց  
զեմքերը փալլիում, կուրծքներն ուղղում  
էին ներքին այն հուզումից, որ իրենց ևս  
միհաճակվել է մասնակցելու Հայրենիքի Մեծ  
Գալիքի կոփմանը: Այսպիսի զերմ մինուոր-  
առում Աղքային— Եկեղեցական ժողովն ա-  
վարտեց իր աշխատանքներու:

Հասան մեկնումի օրերը:

Արտասահմանյան պատգամավորները  
հրաժեշտի համար հավաքվել էին Վեհա-  
փառ Հայրապետի մոտ: Վեհափառ Հայ-  
րապետը իր խոսքն ուղղելով սփուր-  
քի հեռավոր անկյունները դարձող  
պատգամավորներին՝ կոչ արեց համա-  
խմբվել Մայր-Հայրենիքի շուրջը և բոլոր  
ջանքերով նպաստել նրա անսայթաք վե-  
րելքին ու բարգավաճմանը: Վեհափառ Հոր  
կրոնական զգեստի տակ բարախում էր  
կրոնական զգացմունքներից էլ ավելի վեհ ու  
առաքինի՝ հայրենասիրական զգացմունե-  
րով առեցուն մի սիրու: Այդպես է եղել  
միշտ. հայ եկեղեցու լավագույն ներկայա-  
ցուցիչները տառապել են իրենց ժողովրդի  
ցավերով և ոգերով և ուղղութեան նրա  
արջանիկ կյանքով, վառ ապագայի հեռա-  
նկարներով:

Որպես մի նոր Մովսես Սինա լեռան  
փայտից իշնող, Վեհափառ Հայրապետը թի-  
կունքն ուղղելով դեպի Մասսիը տվեց հե-  
տևյալ պատգամը:

Գեացեք և բոլորին ասեք այն, ինչ որ  
տեսաք Հայաստանուս. նշաւարտուրյունը

ասեմ նրանց, ամբողջ նշմարտությունը և մասավանդ մեր առասահմանի հայրենակիցները պետք է ապահով լինեն և պետք է գտնենան, որ մենք ունենք մի շատ մեծ բարեկամ՝ Գեներալիսահմուս ՍՍԱԼԻՆԸ, որի հայրական հոգածության արտահայտությունները մեր ժողովրդի հանրեպ անհաջիկ են: Նրան կարող են իրենց հույսը դնել նրա վրա»:

Վեհափառ Հայրապետի այս կոչով շերտ արձագանք գտավ արտասահման վերադարձող պատգամավորների հայրենակարությունում: Հայ ժողովով լավագույն իղձերը կատարված տեսնելով, նրանք հայրենիքից մեկնեցին խանդավառ արածադրությամբ և հայրենիքին բոլոր ուժերով ծառայալու հաստատակամ յօնով:

Մեկնելուց նրանք որպես սիմվոլ իրենց հետ քսակներով տարան հայրենի հողից: Ազգային—Եկեղեցական ժողովի պատգամավորները վերադառնալով իրենց տեղերը հայրենասահրական խոշոր աշխատանք ծավալեցին և իրենց գոտեանդիլ ու ոգեշունչ ճառերով կարողացան Սփյուռքի հայությանը համախմբել և նրանց սկեռուն հայացքն ուղղել զեպի Մայր-Հայրենիքը՝ Սովետական Հայաստանը:

Այդ մասին է վկայում խմբագրությանս կողմից ստորև տեղի սղության պատճառով որոշ կրծատումներով զետեղվող հոդվածաշարը: Այդ մասին են վկայում նաև ամսադրիս 1945 թ. նոյեմբեր—դեկտեմբեր համարում զետեղված նյութերը:



Պատգամավորները մեկնելուց առաջ են վեցենում

## ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՉՈՒՐԴԻ ԳԱՂԱՓԱՐԸ ԿԸ ԾԱՎԱԼԻ ՄԻՋԻՆ ԱՐԵՎԵԼՔԻ ՄԵԶ (Պ. Թերզյանի հոդվածից)

Էջմիածնի Ազգային Եկեղեցական Համագումարի պատվիրակներու վերադարձին, Միջին Արևելքի գաղութներուն անոնց այցելությանց միջոցավ ստեղծված ընդհանուր խանդավառությունը, հայրենասահրությունը և համագործակցությունը, այդ ժողովին լավագույն արդյունքներն մեկն է: Պատ-

վիրակները, ուր որ այցելեցին՝ հայրենաբաղծ Հայությունը խուսներամ և հոծ բազմությամբ լեցվեցավ Եկեղեցիները և սրահները: Անոնք անհագ կարուտով լսեցին և ներշնչվեցան ամեն մեկ բան և բացատրություններ, որ կը խոսեր Հայաստանի լեռներուն ու դաշտերուն, քա-